

կարգութեան, վշտացած էին պատրիարքական  
աթոռը շրջապատող փցուն խնդիրներէ :

Թո՛ղ Աթոյիկիութեան կամ Ֆրանկութեան  
ներսէն բռնկած խնդիրն ալ, որ Պոլսոյ եկեղեցա-  
կան անկումին արդիւնքն էր եւ այնքան դատա-  
պարտելի դէպքերու եւ դէմքերու տեղի տալէ  
ետքը՝ իր գոյութեան իրաւունքը պիտի ունենար  
ալ. ինչպէս որ ալ ունեցաւ օտար բունի մը վրայ  
պատուաստուելով :

Այլոտ, իր սիրած «Տամալարան»-ին գրոշմը  
չեղծեց այս աղտոտ միջավայրին մէջ : Ս. Կարա-  
պետի մէջ աւելի հաստատուած էր այն գրոշմը իր  
վրայ՝ դժուարին, բայց փայլուն գործունէութեամբ  
մը : Ար զգար իր կոչումը, իր վարդապետական գոր-  
ծունէութեան ոգին ու սահմանը : Ամբողջ սիրով  
թողած էին Շղթայակրին հետ նախանձոտներու  
եւ քսուներու մէջ չբռնալու համար : Ս. Կարա-  
պետի մէջ անխոնջ աշխատութեամբ յաջողած  
էին, գործ եւ արդիւնք մէջտեղ բերելով : Այլոտ  
ամենէն ամբիժ եկեղեցականն էր թերեւս այն  
ատեն Պոլսոյ մէջ. իր մտածութիւնները, իր հայե-  
ցողութիւնները, իր ծրագիրները միշտ նուիրուած  
էին եկեղեցւոյ բարեկարգութեան ու պայծառու-  
թեան : Տեսական եւ գործնական կեանք մ'էր այս :  
Բարեբախտաբար իր այս կարողութիւններն ար-  
տայայտելու համար՝ խօսելու, համոզելու ձիրքն  
ալ կը փայլէր իր վրայ :

Այսպիսի եկեղեցական մը այնպիսի միջա-  
վայրի մը մէջ, ինքնին եւ շուտով պիտի բռնուէր  
ճանչցողներու եւ գնահատողներու կողմէն՝ բար-  
ձրագոյն ծառայութիւններու համար : Իր բեմը, իր  
գործունէութիւնն ու կենցաղագիտութիւնը շուտ  
պատրաստեցին Այլոտի բեզուն ապագան :